

Ծ Ր Ա Գ Ի Ր
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ
ՂԱՍՂՆՔԱԳԻ

48 ժամ ղասախոսություն, 8-րդ կիսամյակ

Ղասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տեղեկատվական անվտանգության խնդիրներին, բացահայտել պետության դերը տեղեկատվական հասարակության ձևավորման գործում, մատնանշել ՀՀ տեղեկատվական ներքին և արտաքին սպառնալիքները, դրանց չեզոքացմանն ուղղված միջոցները:

Ղասընթացի խնդիրներն են՝

- տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնական բաղադրիչների մասին գիտելիքների ձևավորումը,
- նորմատիվ բազայի ուսումնասիրությունը,
- արտերկրում և ՀՀ-ում տեղեկատվական անվտանգության իրականացման ձևերի և մեթոդների հետ ծանոթացումը:

Ներածություն

Ղասընթացի նպատակն ու խնդիրները, հիմնախնդրի արդիականությունը:

Տեղեկատվական անվտանգություն հասկացությունը: Ինֆորմացիայի ուժը և ազդեցությունը մարդկային կենսագործունեության տարբեր ոլորտների վրա: Տեղեկատվական անվտանգությունը՝ հասարակության անվտանգ գոյության անհրաժեշտ պայման:

Տեղեկատվական հասարակություն և տեղեկատվական միջավայր

Ինֆորմացիայի տարածման ձևերը: Ինֆորմացիայի տարածման էլեկտրոնային նորագույն միջոցները (արբանյակային և համակարգչային նորագույն տեխնոլոգիաներ)՝ պատուհան դեպի ազգային և համամարդկային մասշտաբի գործընթացներ: Ինֆորմացիոն գլոբալ հասարակության ձևավորումը: Ժամանակակից լրատվամիջոցները՝ աշխարհի բնակչության վրա ներգործելու գաղափարական-քաղաքական հզոր միջոցներ:

Պետության դերը ինֆորմացիոն հասարակության ծնավորման գործում

Ինֆորմացիան՝ պետական ռազմավարական կարևորագույն գործոն: Պետական ինֆորմացիոն քաղաքականության երկակի բնույթը: Ինֆորմացիոն նորագույն տեխնոլոգիաները՝ հասարակության և պետության ինֆորմացիոն համագործակցության բարելավման նախադրյալներ: Պետական մարմիններում ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման հիմնական նպատակները: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների գլոբալ հեղափոխության երկակի բնույթը. վտանգ միջազգային անվտանգությանը: Նորագույն տեխնոլոգիաների միջոցով պետությունների և հատկապես զարգացած պետությունների հնարավոր ազդեցությունը աշխարհի բնակչության գիտակցության վրա. բարոյահոգեբանական և հոգևոր-մշակութային ասպեկտները:

Առաջադրանք. զարգացած երկրների կողմից աշխարհի բնակչության գիտակցության վրա ինֆորմացիոն ներգործության փորձերի քննարկում և դրանցից պաշտպանվելու մեխանիզմների մշակում:

Տեղեկատվական պատերազմներ

Տեղեկատվական պատերազմ հասկացությունը: Տեղեկատվական պատերազմների նպատակը, դրանք վարելու ռազմավարությունը, առանձնահատկություններն ու հետևանքները: Տեղեկատվական պատերազմներ վարելու հոգեբանական մեթոդները: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը պատերազմական իրավիճակներում: Տեղեկատվական պատերազմների մասնագետների պատրաստում: Տեղեկատվական զենքեր, դրանց տեսակները, յուրահատկությունները, օգտագործումը: Տեղեկատվական հարձակումներ: Տեղեկատվական հանցագործություն:

Առաջադրանք. տեղեկատվական պատերազմների կոնկրետ օրինակների քննարկում. ինչպիսի՞ տեղեկատվական զենքեր, մեթոդներ և ռազմավարություն է կիրառվել կոնկրետ դեպքում:

Տեղեկատվական անվտանգությունը՝ պետական քաղաքականության առաջնային խնդիր

Տեղեկատվական պատերազմներից պաշտպանվելու անհրաժեշտությունը հանգեցնում է տեղեկատվական անվտանգության, դրա տեսական հիմքերի և այն ապահովող կառույցների ստեղծման անհրաժեշտության: Երկրի տեղեկատվական համակարգը՝ ազգային անվտանգության բոլոր ոլորտները համակարգող գործոն: Տեղեկատվական անվտանգությունը՝ ազգային

անվտանգության առանձին բնագավառ: Տեղեկատվական ազգային և համաշխարհային ռազմավարություն: Տեղեկատվական անվտանգության հոգեբանական և տեխնիկական կողմերը, իրավական կարգավորումը:

Առաջադրանք. տեղեկատվական անվտանգության ներլսարանային ռազմավարության մշակում:

Տեղեկատվական անվտանգության միջազգային ուղղությունները

Տեղեկատվական միջազգային անվտանգության առաջնային խնդիրները: Տեղեկատվական անվտանգության ապահովմանն ուղղված միջազգային համագործակցության հիմնական ուղղությունները: Ցանցային համակարգերի պաշտպանության անհրաժեշտությունը ինֆորմացիոն ազդեցության թաքնված տարրերից (վիրուսային ծրագրեր, հակերներ և այլն): Պաշտպանության մեխանիզմները: Տեղեկատվական միջազգային անվտանգության սկզբունքները: Միջազգային ինֆորմացիոն հարաբերությունների իրավական կարգավորումը:

Առաջադրանք. տարբեր երկրների (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա)՝ տեղեկատվական անվտանգության ապահովմանն ուղղված աշխատանքների (հայեցակարգերի մշակում, աշխատանքային ծրագրերի մշակում և իրականացում, գիտաժողովների կազմակերպում, մասնագիտացված կառույցների ստեղծում) համեմատական վերլուծություն:

Միջազգային կազմակերպությունների դերը տեղեկատվական համաշխարհային անվտանգության ապահովման գործում

Ինֆորմացիոն գերմիջավայրը չի ճանաչում ազգային սահմաններ. միասնական կանոնադրության ստեղծման անհրաժեշտություն: ՄԱԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Եվրամիության, Եվրախորհրդի, ԵԱՀԿ-ի ջանքերը ինֆորմացիոն միասնական քաղաքականության մշակման գործում: Խնդրի վերաբերյալ առկա իրավական ակտերի, միջազգային իրավական փաստաթղթերի վերլուծություն:

ՄԱԿ-ի մասնագիտացված կառույցների աշխատանքը տեղեկատվական անվտանգության բնագավառում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ խնդրի առնչությամբ ընդունած փաստաթղթերն ու դրա լուծմանն ուղղված ռազմավարական քայլերը:

Եվրախորհրդի ինֆորմացիոն գործունեության հիմնական ուղղությունները, ԶԼՄ-ի գործունեությանը վերաբերող կոնվենցիաները, դեկլարացիաները, այլ փաստաթղթեր:

ԵԱՀԿ-ի ընդունած փաստաթղթերը առաջինն էին, որ առանձին բաժնով անդրադարձան Եվրոպական երկրների, ԱՄՆ-ի և Կանադայի՝ ինֆորմացիոն բնագավառում համագործակցության ճանապարհներին և հիմնական սկզբունքներին:

Հելսինկյան փաստաթղթեր:

Առաջադրանք. միջազգային կազմակերպությունների՝ տեղեկատվական միջազգային անվտանգությանն առնչվող փաստաթղթերի համեմատական վերլուծություն և գնահատում:

Տեղեկատվական անվտանգության խնդիրը Հայաստանի Հանրապետությունում

Տեղեկատվական անվտանգությունը՝ ՀՀ ազգային անվտանգության առաջնային պայման: Տեղեկատվության բնագավառում ՀՀ ազգային հետաքրքրությունների հիմնական բաղկացուցիչները: Տեղեկատվության պաշտպանության օրենսդրական և նորմատիվ - իրավական բազայի վիճակը ՀՀ-ում, պետական ինֆորմացիոն հստակ քաղաքականության, ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովմանն ուղղված մեթոդների և եղանակների մշակման, մասնագիտացված կառույցների ձևավորման անհրաժեշտություն: ՀՀ-ում տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգի կայացմանը խանգարող հանգամանքներ: ՀՀ տեղեկատվական անվտանգությանն ուղղված ներքին և արտաքին սպառնալիքները: Գլոբալ ինֆորմացիայի ազդեցությունը հասարակական կյանքի քաղաքական, տնտեսական, հոգևոր ոլորտների վրա. գլոբալ մշակույթի քարոզչություն: Տեղեկատվական անվտանգության ՀՀ ներքին և արտաքին քաղաքականության ռազմավարական և ընթացիկ խնդիրները: Տեղեկատվական անվտանգությունը՝ Հայաստանի արտաքին քաղաքականության գործառույթներից մեկը: Պետության պարտավորություններն ու անելիքները երկրի տեղեկատվական անվտանգության ապահովման գործում: Հայաստանի տեղը միջազգային հանրության տեղեկատվական անվտանգության համակարգում:

Առաջադրանք. ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման իրավական, մեթոդաբանական, գիտատեխնիկական և կազմակերպչական կարգավորմանն ուղղված առաջարկների քննարկում:

Գրավոր աշխատանք՝ ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի տեղեկատվական անվտանգության ռազմավարության մոդելի մշակում:

Առաջադրանքների թեմաների վերաբերյալ սեփական ուսումնասիրություններն ու դիտարկումները ուսանողը պետք է ներկայացնի գրավոր տեսքով՝ նշելով օգտագործած աղբյուրները:

Դասընթացի ընթացքում ուսանողները հնարավորություն կունենան *հանդիպելու այն մասնագետներին*, ովքեր պատասխանատու են ոլորտի և դրա նորմատիվ բազայի ձևավորման համար, ընդ որում, կլսեն հակադիր կարծիքներ: Կհանդիպեն նաև տեղեկատվական անվտանգության խնդրին առնչված գործող լրագրողների հետ:

Ուսանողները պետք է ծանոթ լինեն և դասընթացի ուսումնառության ընթացքում օգտագործեն ստորև բերված *գրքերի, նորմատիվ-իրավական ակտերի, աշխատանքային ծրագրերի* գոնե մի մասը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրքեր

1. Поляков Ю. Я., Информационная безопасность и средства массовой информации (Учебное пособие для студентов факультета журналистики), Москва, 2004.
2. Мелюхин И. С., Информационное общество: истоки, проблемы, тенденции развития, Москва, 1999.
3. Малюк, Анатолий Александрович, Информационная безопасность: концептуальные и методологические основы защиты информации (учебное пособие для студентов вузов, обучающихся по специальности "Комплексная защита объектов информации"), Москва, 2004.
4. Домарев В. В. Энциклопедия безопасности информационных технологий. Методология создания систем защиты информации, Киев, 2001.
5. Донцов А. И., Засурский Я. Н., Матвеева Л. В., Информационная и психологическая безопасность в СМИ, Москва, 2002.
6. Колобов, Олег Алексеевич, Информационная безопасность и антитеррористическая деятельность современного государства: проблемы правового регулирования и варианты их решения (учебное пособие), Н. Новгород, 2001.
7. Ярочкин, Владимир Иванович, Информационная безопасность (учебное пособие для студентов вузов), Москва, 2000.
8. Колин, Константин Константинович, Фундаментальные основы информатики: социальная информатика, Москва, 2000.
9. Барсуков В. С., Безопасность: технологии, средства, услуги, Москва, 2001.
10. Почепцов Г. Г., Психологические войны, Москва, 2000.
11. Почепцов Г. Г., Информационные войны, Москва, 2000.

12. Лисичкин В., А., Шелепин Л. А., Третья мировая информационно-психологическая война, Москва, 1999.
13. Балувев Д. Г., Информационная революция и современные международные отношения (учебное пособие), Н. Новгород, 2001.
14. Панарин, Игорь Николаевич, Информационная война и мир, Москва, 2003.

Նորմատիվ - իրավական ակտեր, աշխատանքային ծրագրեր

15. Достижения в сфере информатизации и телекоммуникации в контексте международной безопасности, Резолюция 55/28, принятая Генеральной Ассамблеей ООН, 2000.
16. Роль науки и техники в области международной безопасности и разоружения, резолюцию A/RES/55/29, принятая Генеральной Ассамблеей ООН по докладу Первого Комитета по разоружению и международной безопасности, 2000.
17. Вопросы, касающиеся информации, Информация на службе человечества, резолюцию A/RES/55/136A, принятая Генеральной Ассамблеей ООН по докладу Комитета по специальным политическим вопросам и вопросам деколонизации (Четвертый Комитет), 2001.
18. Декларация об основных принципах, касающихся вклада средств массовой информации в укрепление мира и международного взаимопонимания, в развитие прав человека и в борьбу против расизма и апартеида и подстрекательства к войне, ЮНЕСКО, 1978.
19. ЮНЕСКО и информационное общество для всех, документ, принятый ЮНЕСКО, 1996.
20. Европейской конвенции о защите прав человека и основных свобод, принятая Советом Европы, 1950.
21. Европейское соглашение о защите телевизионных передач, Совет Европы, 1960.
22. Европейское соглашение о предотвращении радиовещания со станций, находящихся за пределами национальной территории, Совет Европы, 1965.
23. Европейское соглашение о роли национального телерадиовещания и управления им, Совет Европы, 1975.
24. Европейская конвенция о трансграничном телевидении, Совет Европы, 1989.
25. Доктрина информационной безопасности Российской Федерации, утверждена 9 сентября 2000 г.
26. Plan de renforcement de la sécurité des systemes d'information de l'État (2004-2007), Republique Française, 2004.
27. Sécurité des systèmes d'information, Contribuer au développement de la normalisation des techniques et outils de gestion de la sécurité, et des critères d'évaluation de la sécurité, Republique Française, Programme de Travail 2002-2003.
28. Guide interministeriel sur les systèmes d'information et application sensibles, service central de la sécurité des systemes d'information, Republique Française, Premier minister, Secrétariat Général de la Défense National, 1997.